

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ սովորողների ընդունելության ժամկետների և փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ

1. Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ ծնող) դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ սույն օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Պետական ուսումնական հաստատությունների համար պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

2. Դպրոցի առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը դպրոց արգելվում է: Ընդունելությունը դպրոցում, որպես կանոն, կազմակերպվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ:

3. Դպրոցի առաջին դասարան երեխայի ընդունելության ժամանակ արգելվում է գիտելիքների ստուգումը:

4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն կատարվում է ընդհանուր հիմունքներով:

5. Դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է ծնողը՝ օրենքով սահմանված կարգով:

6. Ուսումնական հաստատությունը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները ապահովում են դպրոցական տարիքի երեխայի ընդգրկումը ուսումնական հաստատություն:

7. Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

8. Մնացած դեպքերում դպրոցահասակ երեխաների ընդունելությունը դպրոց կատարվում է ամբողջ ուստարվա ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանի հավելվածի համաձայն

Սովորողին դպրոցի առաջին դասարան ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ ուղղված տնօրենին,
- 2) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք՝
- 3) ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը
- 4) 2 լուսանկար 3x4 չափսի,

Դպրոցի տնօրեն  Ս. Ավետիսյան

